



Ամփոփ նկարագիր

Բովանդակություն

Ձեր սոցիալական ապահովության համարը	1
Անձնական տվյալների հափշտակում	2
Համոզվեք, որ գրառումները ճշգրիտ են	2
Սոցիալական ապահովության հարկերի վճարումը	2
Սոցիալական ապահովության «կրեդիտների» վաստակում	3
Սոցիալական ապահովության նպաստների հաշվարկումը	3
Սոցիալական ապահովության նպաստներ	3
Կենսաթոշակի անցում	3
Հաշմանդամություն	4
Կերակրողին կորցրած անձինք	4
Medicare	4
Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ (SSI)	5
Երբ և ինչպես դիմել սոցիալական ապահովության կամ SSI-ի համար	5
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	5

Սույն բրոշյուրը ներկայացնում է սոցիալական ապահովության (Social Security), սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտի (Supplemental Security Income, SSI) և Medicare ծրագրերի առավել կարևոր բնութագրերը: Այդ ծրագրերի, ներառյալ մեր հրապարակումների, վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն կարող եք գտնել մեր կայքում՝ www.socialsecurity.gov:

Ձեր սոցիալական ապահովության համարը

Սոցիալական ապահովության ծրագրով ձեզ հասանելիք նպաստները հիմնվում են ձեր սոցիալական ապահովության համարի օգտագործմամբ ձեր գործատուի կողմից (կամ ինքնագաղթածության դեպքում՝ ձեր կողմից) ներկայացվող եկամտի տվյալների վրա: Հետևաբար, միշտ օգտագործեք

սոցիալական ապահովության ճիշտ համարը և համոզվեք, որ աշխատավայրում օգտագործվող ձեր անունը համընկնում է ձեր սոցիալական ապահովության քարտի վրա նշված անվան հետ: Եթե երբևիցե փոխեք ձեր անունը, ապա պետք է փոխեք նաև այն անունը, որը նշված է ձեր սոցիալական ապահովության քարտի վրա: Սոցիալական ապահովությունը վճար չի գանձում այդ ծառայության համար: Ձեր երեխաների համար պետք է ստանաք սոցիալական ապահովության համար՝ նրանց ծնվելուց անմիջապես հետո: Նրանց համարները ձեզ անհրաժեշտ կլինեն՝ ձեր դաշնային հարկային հայտարարագրում նրանց որպես խնամարկյալ նշելու համար:

Անձնական տվյալների հափշտակում

Ուշադիր եղեք ձեր սոցիալական ապահովության քարտի և համարի նկատմամբ՝ անձնական տվյալների հափշտակումը կանխարգելելու համար: Ցույց տվեք ձեր քարտը գործատուին աշխատանքի անցնելիս, որպեսզի ձեր գրառումները ճշգրիտ լինեն: Այնուհետև պահեք այն ապահով վայրում: Մի կրեք քարտը ձեզ հետ:

Համոզվեք, որ գրառումները ճշգրիտ են

Ձեր անունը և սոցիալական ապահովության համարը, որոնք նշված են ձեր սոցիալական ապահովության քարտի վրա, **պետք է** համընկնեն ձեր գործատուի՝ աշխատավարձի վերաբերյալ գրառումների և W-2 ձևի հետ, որպեսզի մենք ձեր եկամուտների վերաբերյալ տվյալներն ավելացնենք ձեր գրառումներում: Եթե ձեր սոցիալական ապահովության քարտի վրա սխալ տվյալ է նշված, ապա դիմեք սոցիալական ապահովության գրասենյակ՝ փոփոխություններ կատարելու համար: Ստուգեք ձեր W-2 ձևը՝ համոզվելու, որ ձեր գործատուի գրառումները ճիշտ են, իսկ սխալի դեպքում՝ ձեր գործատուին տրամադրեք ճշգրիտ տեղեկատվություն:

Դուք կարող եք ձեր եկամուտների վերաբերյալ գրառումները ստուգել նաև ձեր սոցիալական ապահովության հայտարարագրում: Հայտարարագիրը հասանելի է առցանց 18 տարեկան և ավելի բարձր տարիքի աշխատողների համար: Ձեր հայտարարագիրը տեսնելու համար այցելեք **www.socialsecurity.gov/myaccount** և ստեղծեք *my Social Security* հաշիվ: Եթե հայտարարագիրը չի ներառում ձեր բոլոր եկամուտները կամ պարունակում է որևէ այլ սխալ, ապա ձեր գործատուին և սոցիալական ապահովության տեղական գրասենյակին տրամադրեք ճիշտ տվյալները:

Սոցիալական ապահովության հարկերի վճարումը

Եթե աշխատում եք ինչ-որ տեղ, ապա գործատուն ձեր աշխատավարձից պահում է սոցիալական ապահովության և Medicare-ի հարկեր և ուղարկում է դրանք ներքին եկամուտների ծառայությանը (IRS): Ձեր գործատուն IRS-ին է ուղարկում նաև ձեր աշխատավարձից պահված գումարին համապատասխան գումար: Ձեր գործատուն նաև ձեր բոլոր եկամուտների վերաբերյալ տվյալներ է ներկայացնում սոցիալական ապահովությանը:

Ինքնագրավածության դեպքում դուք վճարում եք ձեր բոլոր սոցիալական ապահովության և Medicare-ի հարկերը ձեր հարկային հայտարարագիրը ներկայացնելիս, իսկ IRS-ը ձեր եկամուտների վերաբերյալ տվյալները ներկայացնում է սոցիալական ապահովությանը: Դուք կատարում եք վճարում աշխատողի և գործատուի միացյալ բաժնին հավասար դրույքով, սակայն գոյություն ունեն ձեր հարկերը հաշվանցող՝ եկամտահարկի որոշակի նվազեցումներ, որոնցից կարող եք օգտվել:

Մենք չենք պահում սոցիալական ապահովության և Medicare-ի ձեր վճարած հարկերը ձեզ համար նախատեսված հատուկ հաշվում: Դրանք օգտագործվում են ներկայումս նպաստներ ստացող մարդկանց համապատասխան վճարումներ կատարելու

համար՝ ճիշտ այնպես, ինչպես ձեր ապագա նպաստների համար վճարում կկատարեն ապագա աշխատողները:

Սոցիալական ապահովության «կրեդիտների» վաստակում

Աշխատելով և սոցիալական ապահովության հարկեր վճարելով՝ դուք վաստակում եք «կրեդիտներ», որոնք հաշվի են առնվում սոցիալական ապահովության նպաստներ ստանալու ձեր իրավունքը սահմանելիս (կախված ձեր եկամուտներից՝ յուրաքանչյուր տարի կարող եք վաստակել մինչև չորս կրեդիտ): Մարդկանց մեծամասնությանը 10 տարվա աշխատանք (40 կրեդիտ) է հարկավոր նպաստներ ստանալու իրավունք ձեռք բերելու համար: Առավել երիտասարդ մարդկանց ավելի քիչ կրեդիտ է հարկավոր հաշմանդամության նպաստների իրավունք կամ իրենց ընտանիքների կողմից կերակրողին կորցնելու նպաստների իրավունք ձեռք բերելու համար:

Սոցիալական ապահովության նպաստների հաշվարկումը

Սովորաբար ձեր սոցիալական ապահովության նպաստը սահմանվում է ձեր կյանքի ընթացքում վաստակած եկամուտների միջին արժեքի որոշակի տոկոսի չափով: Ցածր եկամուտներ ունեցող աշխատողների համար սահմանվում է իրենց կյանքի ընթացքում վաստակած եկամուտների միջին արժեքի ավելի բարձր տոկոս, քան եկամուտների բարձր միջակայքում գտնվող աշխատողների համար: Միջին եկամուտներ ունեցող աշխատողը կարող է ակնկալել կենսաթոշակ, որը կկազմի նրա կյանքի ընթացքում վաստակած միջին եկամուտների մոտ 40 տոկոսը:

Սոցիալական ապահովությունը նախատեսված չէ լինելու ձեր եկամուտների միակ աղբյուրը՝ թոշակի անցնելիս կամ հաշմանդամ դառնալու դեպքում կամ ձեր ընտանիքի միակ եկամուտը՝ ձեր մահվան

դեպքում: Սոցիալական ապահովությունը լրացնում է ձեր խնայողություններին, ներդրումներին, կենսաթոշակներին և ապահովագրական ծրագրերին:

Սոցիալական ապահովության նպաստներ

Ձեր սոցիալական ապահովության հարկերն ապահովում են երեք տեսակի նպաստների վճարում՝ կենսաթոշակային, հաշմանդամության և կերակրողին կորցնելու նպաստ:

Եթե դուք կենսաթոշակային կամ հաշմանդամության նպաստների իրավունք ունեք, ապա ձեր ընտանիքի մյուս անդամները նույնպես կարող են նպաստներ ստանալ: Օրինակ՝ ձեր ամուսինը (կինը) նպաստի իրավունք ունի, եթե առնվազն 62 տարեկան է: Ձեր ամուսինը (կինը) նպաստ ստանալու իրավունք կարող է ունենալ նաև այն դեպքում, երբ 62 տարեկանից ցածր է և ինամում է մինչև 16 տարեկան ձեր երեխային (կամ 16 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, սակայն հաշմանդամ երեխային) և իրավասու է՝ ըստ ձեր գրառումների: Ձեր չամուսնացած երեխաները նույնպես իրավունք ունեն, եթե 18 տարեկանից ցածր են, 18-19 տարեկան են և լրիվ դասացուցակով հաճախում են տարրական կամ միջնակարգ դպրոց կամ 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի են և ունեն հաշմանդամություն: Եթե ամուսնալուծված եք, ձեր նախկին ամուսինը (կինը) կարող է նպաստների իրավունք ունենալ՝ ձեր գրառումների հիման վրա:

Կենսաթոշակի անցում

Մենք ձեզ նպաստներ ենք վճարում, երբ դուք հասնում եք լրիվ կենսաթոշակային տարիքի (նվազեցված կենսաթոշակներն առկա են դեռևս 62 տարեկան հասակում) և եթե բավականաչափ երկար եք աշխատել: Եթե ծնվել եք 1944 թվականին կամ ավելի վաղ, ապա սոցիալական ապահովության լրիվ կենսաթոշակի իրավունք ունեք 65 տարեկան

հասակում: Եթե ծնվել եք 1945 և 1954 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, ապա ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը 66 տարեկանն է: Լրիվ կենսաթոշակային տարիքն աստիճանաբար աճում է՝ հասնելով 67 տարեկանի այն մարդկանց համար, որոնք ծնվել են 1955 և 1960 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Լրիվ կենսաթոշակային տարիքը 67 տարեկանն է այն մարդկանց համար, որոնք ծնվել են 1960 թվականից հետո: Եթե հետաձգում եք ձեր կենսաթոշակի անցնելը լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, ապա կստանաք հատուկ կրեդիտ յուրաքանչյուր ամսվա համար, որում նպաստներից չեք օգտվել՝ մինչև 70 տարեկան դառնալը: Եթե նախընտրում եք հետաձգել ձեր կենսաթոշակի անցնելը 65 տարեկանը լրանալուց հետո, ապա պետք է այնուամենայնիվ Medicare-ի մասով դիմում ներկայացնեք՝ 65 տարեկանը լրանալուց երեք ամիս առաջ:

Հաշմանդամություն

Դուք կարող եք ստանալ հաշմանդամության նպաստներ, եթե բավական երկար եք աշխատել ու ստացել եք բավականաչափ կրեդիտներ և եթե ունեք լուրջ ֆիզիկական կամ մտավոր խնդիր, որը թույլ չի տալիս ձեզ աշխատել առնվազն մեկ տարի կամ եթե անբուժելի հիվանդություն ունեք: Հաշմանդամության վերաբերյալ դիմումների մշակումը կարող է տևել մի քանի ամիս, հետևաբար նպաստներին դիմելու համար մի սպասեք աշխատանքից դուրս գալուց հետո մեկ տարի:

Կերակրողին կորցրած անձինք

Եթե ձեր մահը տեղի է ունենում ձեր ընտանիքի որոշ անդամներից շուտ, ապա ձեր մահը վերապրած (կերակրողին կորցրած) որոշակի անձինք կարող են նպաստներ ստանալու իրավունք ունենալ: Նրանց թվին են դասվում այրի կանայք և տղամարդիկ

(և ամուսնալուծված այրի կանայք և տղամարդիկ), երեխաները և ինամարկյալ ծնողները:

Medicare

Առողջապահական նպաստները բաժանվում են Medicare ծրագրով չորս մասի: Ձեր աշխատելու տարիների ընթացքում ձեր կողմից վճարվող Medicare-ի հարկերի միջոցով ֆինանսավորվում է Medicare ծրագրի մաս Ա-ն (հիվանդանոցային ապահովագրություն), որը հնարավորություն է տալիս վճարել ստացիոնար հիվանդների՝ հիվանդանոցում գտնվելու, մասնագիտական բուժքույրական ինսամքի և այլ ծառայությունների համար: Սովորաբար դուք հավելավճարներ եք կատարում Medicare ծրագրի մնացած երեք մասերի համար: Medicare ծրագրի մաս Բ-ի միջոցով (բժշկական ապահովագրություն) վճարվում են բժիշկների, ամբուլատոր հիվանդանոցային այցերի և այլ բժշկական ծառայությունների ու պարագաների վճարները: Medicare ծրագրի մաս Գ-ն (Medicare արտոնյալ ծրագրեր) հնարավորություն է տալիս մաս Ա-ում և մաս Բ-ում ընդգրկված անձանց իրենց բոլոր առողջապահական ծառայությունները ստանալ ծառայություններ տրամադրող մեկ կազմակերպության միջոցով: Medicare ծրագրի մաս Դ-ն (Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի ապահովագրություն) օգնում է հատուցել դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսը:

ՆՇՈՒՄ. դուք պետք է գրանցվեք Medicare ծրագրի համար, նույնիսկ եթե չեք նախատեսում թոշակի անցնել 65 տարեկան հասակում: Եթե չեք ներգրավվում մաս Բ-ում և մաս Դ-ում՝ առաջին անգամ իրավունք ստանալիս, ապա հնարավոր է՝ ստիպված լինեք տուգանք վճարել այնքան ժամանակ, որքան կուներնաք մաս Բ-ի կամ մաս Դ-ի ապահովագրություն: Հնարավոր է նաև, որ ստիպված լինեք սպասել ներգրավվելու համար, ինչը կհետաձգի ապահովագրությունը:

Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ (SSI)

SSI-ի նպաստներ ստանալու համար պետք է լինեք 65 տարեկան կամ ավելի, լինեք կույր կամ հաշմանդամ: Պետք է ունենաք նաև ցածր եկամուտ և քիչ միջոցներ՝ ամսական վճարներ ստանալու համար: SSI-ի հաշմանդամության նպաստներ ստանալու իրավունք կարող են ունենալ ինչպես երեխաները, այնպես էլ մեծահասակները:

Ամսական գումարը, որը կարող եք ստանալ, կախված է ձեր եկամտից, միջոցներից և բնակավայրից: Դաշնային կառավարությունը վճարում է հիմնական նպաստը, և որոշ նահանգներ գումար են ավելացնում դաշնային նպաստին: Դիմեք ձեր տեղական սոցիալական ապահովության գրասենյակ՝ ձեր նահանգում SSI-ի վճարման չափը պարզելու համար: SSI ստացող որոշակի մարդիկ իրավունք ունեն նաև ստանալ Medicaid, սննդի լրացուցիչ աջակցության ծրագիր (SNAP) և այլ օգնություն:

Դուք կարող եք SSI-ի նպաստներ ստանալ, նույնիսկ եթե չեք աշխատել: SSI-ն ֆինանսավորվում է ընդհանուր հարկային մուտքերով, սոցիալական ապահովությունից բացի այլ հարկերով:

Երբ և ինչպես դիմել սոցիալական ապահովության կամ SSI-ի համար

Դուք պետք է կենսաթոշակային նպաստների դիմում ներկայացնեք նպաստների սկսման ձեր նախընտրած ամսաթվից մոտավորապես երեք ամիս առաջ: Եթե պատրաստ չեք կենսաթոշակի անցնել, սակայն նախատեսում եք շուտով դիմել, ապա այցելեք սոցիալական ապահովության կայքը: Եթե արդեն իսկ ունեք սոցիալական ապահովության բավականաչափ կրեդիտներ՝ նպաստներ ստանալու իրավունք ունենալու համար, ապա կարող եք օգտվել կենսաթոշակի գնահատման մեր առցանց ռեսուրսից՝ **www.socialsecurity.gov/estimator**: Կենսաթոշակի գնահատումը ֆինանսական

ալանավորման հարմար, ապահով և արագ գործիք է, որը ձեզ հնարավորություն է տալիս ստեղծել ձեր անհատական «ինչ կլինի, եթե» իրավիճակները: Եթե դեռևս բավականաչափ կրեդիտներ չունեք նպաստներ ստանալու իրավունքի համար, մենք առաջարկում ենք նպաստների այլ հաշվիչներ՝

www.socialsecurity.gov/planners: Կարող եք նաև կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստների համար դիմել առցանց՝ **www.socialsecurity.gov**:

Դուք պետք է դիմեք սոցիալական ապահովության կամ SSI-ի հաշմանդամության նպաստների համար, եթե հաշմանդամությունն այլևս ձեզ աշխատելու հնարավորություն չի տալիս: Դեպքերի մեծ մասում՝ դուք հնարավորություն ունեք լրացնել հաշմանդամության ամբողջ դիմումը կամ դրա մեծ մասը մեր կայքում: Ընտանիքի կերակրողի մահվան դեպքում դուք պետք է դիմեք մեզ՝ պարզելու, թե արդյոք դուք և ընտանիքի այլ անդամները կարող եմ նպաստներ ստանալ:

Նպաստների համար դիմելիս անհրաժեշտ է ցույց տալ նպաստ ստանալու ձեր իրավունքը հաստատող փաստաթղթեր: Անհրաժեշտ է ներկայացնել նպաստների համար դիմող ընտանիքի յուրաքանչյուր անդամի ծննդյան վկայականը, ամուսնության վկայականը (եթե դիմում է ձեր ամուսինը/կինը) և ձեր վերջին W-2 ձևը (կամ հարկային հայտարարագիրը՝ ինքնազբաղվածության դեպքում):

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր

մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցեյե՞ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնությունն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ:

վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today
and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10006-AM | July 2017
Ամփոփ նկարագիր
A "Snapshot" (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: